ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏԸ «ՕՂԱԿԻ» ՄԵՋ

Ստեփանակերտի երկաթուղային կայարանը Երևի ամենափոքրն է երկրում: Կայարանը ենթարկվում է Կիրովաբադի երկաթուղային վարչությանը, որը և նշանակում ու ազատում է աշխատողներին, տալիս աշխատավարձ: Ստեփանակերտի երկաթուղային կայարանի աշխատողների 80 տոկոսը ապրում է Աղդամ քաղաքում: Իսկ տեղում բնակվող երկաթուղայիններն արդեն 3-րդ ամիսն է զրկված են աշխատավարձից, որովհետև Կիրովաբադը աշխատավարձ չի տալիս, իսկ Աղդամում ապրող աշխատողները աշխատանքի չեն գալիս, բայց աշխատավարձը կանոնավոր ստանալուց բացի, ստանում են նյութական օգնություն ու պարգևատրում:

Նման փոքր կայարանում այսօր կենտրոնացված են մոտ 200 բեռնված վագոններ: Թիստ ծանրաբեռնված են նաև կոնտեյներային հրապարակի գծերը. «ճերքագրված» են 250 կոնտեյներով բարձված վագոններ: Իսկ դիզելային վառելիքի բացակայության պատճառով պարապության է մատնված կայարանի միակ մանևրային ջերմաքարշը:

Եթե վաղը շրջափակումը վերացվի, միևնույն է Ստեփանակերտի երկաթուղային կայարանը չի

ՇՐՋԱՓԱԿՈՒՄ

կարող լրիվ կարողությամբ աշխատել: Չի կարող, որովհետև ինչպես ասացինք, նրա աշխատողների 80 տոկոսը Աղդամում ապրող ադրբեջանցիներն են և հրաժարվում են Ստեփանակերտ աշխատանքի գալուց, իսկ Կիրովաբադի երկաթուղային վարչությունը նրանց աշխատանքից շազատելով, Ստեփանակերտի հայ բնակիչներից և ոչ մեկին աշխատանքի չի ընդունում...

Երկրորդը: Ստեփանակերտի միակ գործող ուղին սկսվում է օդանավակայանից, որը ենթարկվում է Աղդամի օդանավակայանին: Թռիչքների ընդունումն ու բացթողումը որոշում է Աղդամի օդանավակայանի դիսպետչերական ծառայությունը: Երկնքի թեթև ամպելն անգամ առիթ է դառնում արգելելու բոլոր տեսակի թռիչքները: Այս «միջոցով» էլ փակվում է նաև օդային ուղին: Իսկ այսօր Ստեփանակերտի 80 հազար բնակչության սնունդը, այլուր ապահովվում է ուղղաթիռների միջոցով: Երկու օր թռիչքը խանգարված է և ահա քաղաքի միակ հացի գործարանը, որի հզորությունը 25 հազար բնակչության համար է նախատեսված, այլուր չլինելու պատճառով մատնվել է պարապուրդի: Այլուրի պակասության պատճառով չեն աշխատում նաև քաղաքի կոոպերատիվ հացի փռերը, իսկ հացի խանութների մոտ հերթերը մեծ չափերի են հասնում: Այո, ծանր վիճակ է ստեղծված Ստեփանակերտում: Մարզկենտրոնը շրջափակման մեջ է՝ կտրված իր շրջկենտրոններից, գյուղատնտեսական տնտեսություններից: Մարդը, բանչարեղենը այգիներում, բոստաններում փչանում են, իսկ Ստեփանակերտը զրկված է այդ բարիքներից:

Ճանապարհները փակ են: Իսկ փակողները մեր դարավոր «բարեկամներն» են, «եղբայրները»...

Սակայն այս ամենը չի ընկնում արցախցուն, ընդհակառակը, նա ավելի հաստատուն է կանգնում իր դիրքերում: Ավելի է համոզվում, որ իր պահանջներն արդար են: Դիմակայում է Արցախը: Նրան զորավիգ է մայր Հայաստանը, ողջ հայ ժողովուրդը:

Շրջափակում: Իրական կյանքում օգտագործումից հանված բառը Արցախում հնչում է գրեթե ամեն քայլափոխի: Այդ մի հատիկ բառը շատ բան է ասում մեր հարևան «եղբայրների» մասին:

ԼԵՎՈՆ ՄԿՐՏՉՅԱՆ